**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ու Մ**

14 դեկտեմբերի 2021 թվականի թիվ 361-Ա

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), 2021 թվականի դեկտեմբերի 14-ի նիստում, քննարկելով Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև «Նարիմանյան», «Խաչիար», «Կապավոր», «Շինֆորում», «Ավա-2000», «Լիլիթ-87», «ԱԱԲ Պրոեկտ», «Շինպլյուս», «Արիովշին», «Շիրինշին», «Արարատ-Ճանշին», «Բիլդեր Քոնսթրաքշն», «Լև-Շին», «Ռուբիկ և Իշխան», «Շինկո», «Ստրոյելնայա Կոմպանիա «Գարանտ»», «Էլիտստրոյ», «Տեր-Հայրապետյան Շին», «Մ. Բուստ», «Ապառաժ», «Երվադա», «Երևանյան բազալտ», «Ապառաժ», «Հիպերնովա», «Եղնիկիպես», «Վառշին», «Ֆայլվորդ» սահմանափակ պատասխանատվությամբ և «Սահակյանշին» և «Ճառագայթ» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ նաև՝ **Ընկերություններ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի մրցակցության գնահատման և վերահսկողության վարչության համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժնի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 10-ին ներկայացվել է զեկուցագիր (այսուհետ՝ **Զեկուցագիր**), որում նշվել է, որ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության առարկա են դարձել Երևան քաղաքի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների (այսուհետ նաև՝ **Աշխատանքներ**) ձեռքբերման նպատակով 2017 թվականից 2021 թվականներին կազմակերպված գնման ընթացակարգերը:

Վերոնշյալ գործընթացի շրջանակներում գնման ընթացակարգերի, ինչպես նաև վերջիններիս հրավերների տեխնիկական բնութագրերի նախնական ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել որոշակի հանգամանքներ, որոնք կարող են վկայել տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտումների մասին:

1. Գնման ընթացակարգերի մասնակիցներից յուրաքանչյուրը ընտրված մասնակից է ճանաչվել կոնկրետ չափաբաժնի մասով, ուստի առկա է տարածքների (վարչական շրջանների) աշխարհագրական բաժանման հնարավորություն, ինչը ենթադրում է, որ որոշ մասնակիցներ հաղթել են միայն որոշ աշխարհագրական տարածքներում: Ընդ որում, հրավերների տեխնիկական բնութագրերում առկա չէ տեղեկատվություն, թե կոնկրետ որ վարչական շրջանի համար է նախատեսված յուրաքանչյուր չափաբաժինը: Նշված հանգամանքների համատեքստում քննարկման ենթակա են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» նախկին խմբագրությամբ օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 5.2-րդ հոդվածի 1-ին մասով և 163-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտման հատկանիշների առկայությունը:

Մասնավորապես՝ Օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելվում է տնտեսական գործունեության այնպիսի համակարգումը, որը հանգեցնում է և (կամ) կարող է հանգեցնել՝ (...)

2) աճուրդների, սակարկությունների, գնումների կամ մրցույթների ժամանակ գների բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

3) ապրանքային շուկայի բաժանմանը՝ ըստ տարածքային սկզբունքի, ապրանքների իրացման կամ ձեռքբերման ծավալի, իրացվող ապրանքների տեսականու կամ վաճառողների կամ գնորդների կամ պատվիրատուների կազմի.

8) այլ եղանակներով մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Օրենքի $16^3$-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

2. Գնման ընթացակարգերի շրջանակում հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների և նախահաշվային գների համադրության արդյունքում պարզ է դարձել, որ մասնակիցները դրսևորել են գործողությունների հնարավոր համաձայնեցվածության մասին վկայող վարքագիծ: Մասնավորապես՝ միևնույն մասնակիցները հայտ են ներկայացրել գնման ընթացակարգի մի քանի չափաբաժինների մասով: Ընդ որում, վերջիններիս գնային առաջարկների հաշվարկման մեթոդները նախահաշվային գնի նկատմամբ տարբեր չափաբաժինների դեպքում տարբերվել են, քանի որ կոնկրետ չափաբաժինների դեպքում մասնակիցները ներկայացրել են առավել ցածր գնային առաջարկ և ճանաչվել հաղթող մասնակից: Մինչդեռ մյուս չափաբաժինների դեպքում մասնակիցները նույնանման հանգամանքներում ներկայացրել են առավել բարձր գնային առաջարկներ, ինչը կարող է վկայել չափաբաժիններին մասնակցության ապահովման և մասնակիցների միջև մասնակցության պայմանների վերաբերյալ նախապես համաձայնություն ձեռք բերված լինելու հնարավորության մասին: Վերոգրյալի համատեքստում քննարկան ենթակա են Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված իրավախախտման հատկանիշների առկայությունը:

Մասնավորապես՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած

որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 31-ին ուժի մեջ մտած օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 31-ին ուժի մեջ մտած օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 31-ին ուժի մեջ մտած օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Տվյալ պարագայում, գնման ընթացակարգերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի և մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից գնման ընթացակարգերի շրջանակներում դրսևորած վարքագիծը կարող է պարունակել հակամրցակցային համաձայնության, տնտեսական գործունեության համակարգման, ինչպես նաև պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Երևանի քաղաքապետարանի և Երևան քաղաքի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերին հայտ ներկայացրած Ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 31-ին ուժի մեջ մտած օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասը և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև «Նարիմանյան», «Խաչիար», «Կապավոր», «Շինֆորում», «Ավա-2000», «Լիլիթ-87», «ԱԱԲ Պրոեկտ», «Շինպլյուս», «Արիովշին», «Շիրինշին», «Արարատ-Ճանշին», «Բիլդեր Քոնսթրաքշն», «Լև-Շին», «Ռուբիկ և Իշխան», «Շինկո», «Ստրուիելնայա Կոմպանիա «Գարանտ»», «Էլիտստրոյ», «Տեր-Հայրապետյան Շին», «Մ. Բուատ», «Ապառաժ», «Երվադա», «Երևանյան բազալտ», «Ապառաժ», «Հիպերնովա», «Եղնիկիպես», «Վառշին», «Ֆայլվորդ» սահմանափակ պատասխանատվությամբ և «Սահակյանշին» և «Ճառագայթ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թ.դեկտեմբերի 14

Երևան